

## ԱՇԽԱՏՈՒԺԻ ՀԵՏԱԳՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ THE MAIN RESULTS OF THE LABOUR FORCE SURVEY

Ժողովածուի այս հատվածում, ի լրումն աշխատուժի հետազոտության (ԱՀ) 2014-2017թթ. արդյունքների, ներկայացված են նաև 2008-2013թթ. տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքներով հաշվարկված մի շարք առանցքային ցուցանիշներ՝ ժամանակագրական շարքի վերլուծության նպատակով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2014-2017թթ. ԱՀ ընտրանքի մեթոդաբանությունը կրել է որոշակի փոփոխություններ (ընտրանքի մեթոդ, ընտրանքի չափ), 2014-2017թթ. տվյալները վիճակագրորեն թույլատրելի սահմաններում կարող են որոշակիորեն տարբերվել / շեղվել նախորդ տարիների տվյալներից, ինչը հարկ կլինի նկատի ունենալ ժամանակագրական շարքերի համադրման ժամանակ:

Աշխատուժի հետազոտության արդյունքներն ապահովում են աշխատանքի շուկայի կարճաժամկետ վիճակագրական ցուցանիշներ, հիմնականում՝ տարեկան, մասամբ նաև՝ եռամսյակային: Հետազոտության շրջանակում հասանելի են վիճակագրական այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են հետազոտվող ժամանակաշրջանում երկրի աշխատանքային ռեսուրսների կամ աշխատունակ տարիքի բնակչության թվաքանակը<sup>1</sup>, սեռատարիքային, կրթական և ընտանեկան կազմը, կառուցվածքն ըստ աշխատաշուկայում ակտիվ և ոչ ակտիվ բնակչության՝ ըստ տարատեսակ բնութագրիչների, տնտեսության տարբեր ոլորտներում զբաղվածությունը, այդ թվում նաև՝ չգրանցված, աշխատաժամերը, գործազրկությունը՝ իր պատճառներով, գործազրկության միջին տևողությունը և այլն:

Հետազոտության արդյունքներով հաշվարկված ցուցանիշները միջինացված են եռամսյակային կամ տարեկան կտրվածքով և ներկայացված են ըստ նշանակության՝ բացարձակ (հազար մարդ, ժամ, ամիս) և հարաբերական արժեքներով (մակարդակ, օրինակ՝ զբաղվածության մակարդակ):

In this section of handbook, in addition to the Labor Force Survey (LFS) 2014-2017 findings, a number of key indicators are represented based on the Households Integrated Living Condition Survey 2008-2013 findings, for the purpose of time series analysis.

Taking into account the fact that in 2014-2017 LFS sampling methodology has undergone some changes (the sampling method, the sample size), 2014-2017 data might be slightly differ from the previous years' data, which must be taken into account when comparing time series.

The Labour Force Survey findings provide short-term labour market statistical indicators, mostly annual and quarterly. The survey findings cover statistical indicators such as the country labour resources or working age population<sup>1</sup> by age, sex, education, family statuses; active and inactive population in labour market by various characteristics; employment in different sectors of economy, not registered employment as well, working hours, unemployment, reasons for it, average unemployment duration, etc.

The results of the survey are averaged quarterly or yearly basis and are presented in absolute terms (thousand people, hours, months) and relative values (e.g. employment rate).

<sup>1</sup> Հետազոտությամբ ուսումնասիրվող երևույթների մասշտաբների հնարավորինս ընդգրկման նպատակով **աշխատունակ տարիք** սահմանվել է 15-75 (ներառյալ) տարիքային միջակայքը:

*For the possible inclusion of phenomena studied by the survey, the **working age** has been defined 15-75 (including) age range.*